

## ԵՐՈՒՍԱՂԵՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ

### «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ» ԵՒ «ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»

«Երուսաղեմի Պատրիարքութեան վերջին երկու կարեւոր հրատարակութիւնները են Գրիգոր Տարեւացիի «Գիրք Հարցմանցը» եւ Քաղկեդոնի Ժողովի (451) երկարնակութեան հարցին առնչութեամբ բղբակցութեանց հաւաքածոյ մը նկատուած «Գիրք Թղթոցը», կ'ըսէ Թորգով Պատրիարք Մանուկեան:

Գիրք Հարցմանցը վերատպումն է Կոստանդնուպոլիս 1739ին տպուած օրինակին, անոր կցելով հասկնալի պատճառներով դուրս գցուած «Ընդդեմ Տաճկաց» գլուխը, որ Բարգէն նպա. Կիւլէսէրեանի ուսումնասիրութեամբ տպուած էր Վիեննայի մէջ, 1930ին:

Իսկ Գիրք Թղթոցին 1901ի տպագրութիւնը, Թիֆլիս տպուած Յովսէփ Իզմիրլեանցի կտակով հաստատուած մրցանակին եւ հրատարակութեանց Ե. հատորն է, որ պէտք չէր նոյնութեամբ վերատպուէր: Թուղթերէն ոմանք անամբողջ են, ոմանք ոչ մէկ կապ ունին Քաղկեդոնի Ժողովին մէջ նկատի առնուած հարցերուն հետ: Թորգով Պատրիարք մտահոգ էր թէ՝ «Ո՞վ պիտի վերահսկէր աշխատանքները վերատպուելիք Գիրք Թղթոցի հրատարակութեան»: Նոյն ատեն ունէր պատասխանը իր մտահոգութեան: «Նա, իննունամեայ եւ Փիզիքական մարմնի տկարութեանց հետեւանքով իր սենեակի շրջափակէն հեռանալու անկարող Ծովականն էր, Գեր. Տ. Նորայր Արքեպոս. Պողարեանը: Մեր ձեռագիրներու լեզուն հասկցող մասնագէտն է, գրաքարի հմուտ եւ մեր մատենագիրները ուսումնասիրող գիտուն պատմագէտը»:

Եւ Նորայր Արքեպիսկոպոս իր բացատրականով կը յայտնէ. «Կատարած ենք զանազան փոփոխութիւններ. Ա. Նիւթերը դասաւորած ենք ժամանակագրական կարգին համաձայն. Բ. Այն բուդրերը որ թերի էին լրացուցած ենք զանազան ձեռագիրներու եւ տպագիրներու հետեւելով. Գ. Կատարած ենք շատ մը սրբագրութիւններ ...: Դ. Օգտագործած ենք մեծանուն բանաւէր նոյնիշխ նպա. Դուրեանի օրինակը ...:» Զեղչուած են եօթը տարբեր գրութիւններ, մօտ 120 էջ: Աւելցուած են հինգ ուրիշ գրութիւններ:


«Այս հատորին արժանիքը - կը հաւաստէ Թորգով Պատրիարք - պէտք է նկատել միութիւնը նպատակին որուն այնքան նախանձախնդրութեամբ հետամուտ է Ծովական: «Այս հատորին մէջ իր ներկայացուցած Մանօքութիւնները (էջ 669-674) եւ Բացատրականը (էջ 712-713), մինչև անգամ Ցանկ Յանուակ Անուանցը (էջ 675-711), ինքնին ցոյց կու տան ահագնութիւնը աշխատանքին, արժանիքը մասնագէտ աշխատասիրողին, եւ բժախնդրութիւնը բանաւէրին:»

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան քաշալերանքով հրատարակուած Գիրք Հարցմանցը (1070 էջ) եւ Գիրք Թղթոցը (752 էջ) «Հայաստանեաց Առաքելական Ուղղափառ Նկեղեցւոյ դաւանութեան սկզբանդրիւններ կը ներկայանան - կ'ըսէ Թորգով Պատրիարք - զորս կ'ընծայենք մեր Նկեղեցւոյ զաւակներուն, իրբեւ հոգեւոր սնունդ եւ «Վահան ամրութեան որով կարասցեն զամենայն նետս մուխս չարին շիջուցանել:»

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ  
Ս. ԱԹՈՌՈՅ

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION ARMENIAN LIBRARY

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՏԱՐ ԳՎԱԼԻՒՍ ԿՐԻՊԵՏԱԿԱՆ ՀԻՄԱՐԿՈՒԹՅԱՆ



Երուսաղեմ  
Տպարան Սրբոց Յակոբեանց  
1993

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION  
ARMENIAN LIBRARY

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ ԳԱԼՈՒՍ ԿԻՒՂԵՆԿԵԱՆ  
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

ԵՐԿՐՈՐԴ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԵՐՈՒՍԱՂԵՄ  
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ  
1994